ԱՍՏԾՈ ՏԱՆ ԶՈՀԱՍԵՂԱՆԸ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԾՆՆԴՈՑ 35:1-10

*1 Աստված ասաց Հակոբին. Վե՛ր կաց, բարձրացի՛ր դեպի Բեթել և այնտե՛ղ բնակվիր և
այնտեղ մի զոհասեղա՛ն շինիր Աստծուն, որ երևաց քեզ քո եղբայր Եսավից փախչելու
ժամանակ: 2 Հակոբն ասաց իր ընտանիքին և իր հետ եղող բոլորին. Հեռացրե՛ք ձեր մեջ
եղած օտար աստվածները, մաքրվե՛ք և փոխե՛ք ձեր հանդերձները: 3 Վեր կենանք
բարձրանանք դեպի Բեթել, որպեսզի այնտեղ զոհասեղան շինեմ այն Աստծուն, որը լսեց ինձ
իմ նեղության օրը և ինձ հետ էր իմ ճանապարհորդության ժամանակ: 4 Եվ Հակոբին
տվեցին իրենց ձեռքին եղած բոլոր օտար աստվածները և իրենց ականջօղերը: Հակոբը
դրանք թաղեց Սյուքեմի մոտ գտնվող կաղնու տակ: 5 Ճանապարհ ընկան, և Աստծու երկյուղը
պատեց իրենց շուրջը եղած քաղաքները, և բնակիչները չհետապնդեցին Հակոբի
որդիներին: 6 Հակոբը և նրա հետ եղած ամբողջ ժողովուրդը եկան Լուզ, այսինքն՝ Բեթել, որ
Քանանի երկրում է: 7 Այնտեղ մի զոհասեղան շինեց և այդ տեղը կոչեց Էլ-Բեթել, որովհետև
այդտեղ էր Աստված երևացել իրեն, երբ որ փախչում էր իր եղբորից:*

*10 Աստված նրան ասաց. Քո անունը Հակոբ է. դու այլևս Հակոբ չես կոչվելու, այլ Իսրայել
կլինի քո անունը: Եվ նրա անունը դրեց Իսրայել:*

I. ԱՍՏԾՈ ՏՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՌԱՆՑ ԶՈՀԱՍԵՂԱՆ:

*1 Աստված ասաց Հակոբին. Վե՛ր կաց, բարձրացի՛ր դեպի Բեթել և այնտե՛ղ բնակվիր և
այնտեղ մի զոհասեղա՛ն շինիր Աստծուն, որ երևաց քեզ...*

- ***«Զոհասեղան» բառը Ծննդոցում հիշատակված է 11 անգամ: Յուրաքանչյուր մարդ, ով հանդիպել է Տիրոջը, զոհասեղան է կառուցել Նրա համար:***

  - *Եւ Նոյը մի սեղան շինեց Եհովայի համար... Ծնն. 8:20*
  - *Աբրահամը չորս տարբեր առիթներով չորս զոհասեղան շինեց Եհովայի համար:*
  - *Իսահակը զոհասեղան շինեց եւ Եհովայի անունը կանչեց... Ծնն. 26:25*
  - *Հակոբը քարի վրա զոհասեղան շինեց, որն օծեց Ծննդոց 28-ում:*

  *3 Վեր կենանք բարձրանանք դեպի Բեթել, որպեսզի այնտեղ զոհասեղան շինեմ
  այն Աստծուն, որը լսեց ինձ իմ նեղության օրը:*

- ***Հակոբի կյանքի ուղին վկայություն է իր ընտանիքի համար:***
- ***Զոհասեղանը պահանջում է ինքնաքննություն:***

*2 Հակոբն ասաց իր ընտանիքին և իր հետ եղող բոլորին.
Հեռացրե՛ք ձեր մեջ եղած օտար աստվածները, մաքրվե՛ք և փոխե՛ք ձեր հանդերձները:*

II. ԶՈՀԱՍԵՂԱՆԸ ՀԱՆՁՆՎԵԼՈՒ, ՆՎԻՐՄԱՆ ԵՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ Է:

4 Եվ Հակոբին տվեցին իրենց ձեռքին եղած բոլոր օտար աստվածները և իրենց ականջօղերը: Հակոբը դրանք թաղեց Սյուքեմի մոտ գտնվող կաղնու տակ:

Հռ. 12:1-2 – 1 Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը: 2 Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը:

Դավիթը Սաղմոս 51-ում ասաց – Աստծու ընդունելի զոհը կոտրված հոգին է.

Սաղմոս 51:16-17 – 16 Որովհետև դու զոհ չես ուզում, եթե ոչ, ես կմատուցեի քեզ, և ոչ էլ ողջակեզներն ես հավանում: 17 Աստծու ընդունելի զոհը կոտրված հոգին է. բեկված ու խոնարհ սիրտը, ո՜վ Աստված, դու չես անարգում:

Եբրայեցիս 10:5 – Դրա համար Քրիստոսը աշխարհ մտնելիս ասում է. Զոհ ու պատարագ չկամեցար, բայց ինձ համար մի մարմին պատրաստեցիր.

- ***Նոր Կտակարանում զոհասեղանները պարտադիր չէ, որ ֆիզիկական կառույցներ լինեն:***

III. ԹՈՂ ՁԵՐ ՍԻՐՏԸ ԶՈՀԱՍԵՂԱՆ ԼԻՆԻ ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ:

Եզեկիել 36:26-27 – 26 Ապա ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ, ձեր մարմնից պիտի վերցնեմ քարե սիրտը ու ձեզ մարմնեղեն սիրտ տամ: 27 Եվ իմ հոգին պիտի դնեմ ձեր մեջ և այնպես անեմ, որ իմ կանոններով ընթանաք, իմ պատվիրանները պահեք և դրանք կատարեք:

- ***Յուրաքանչյուր մարդու սիրտում կա մի անտեսանելի զոհասեղան, որտեղ պայքար է մղվում մարմնի և հոգու միջև:***

Երեմիա 17:9-10 – Սիրտն ամենից ավելի խաբեբա է և կամակոր. այն ո՞վ կարող է հասկանալ: Ես՝ Տերս, փորձում եմ սիրտը, քննում եմ միտքը, որ մարդուն տամ իր ճանապարհների համեմատ և իր արարքների արդյունքի համեմատ:

Սաղմոս 139:23-24 – 23 Փորձի՛ր ինձ, ո՜վ Աստված, և ճանաչի՛ր իմ սիրտը, քննի՛ր ինձ և ճանաչի՛ր իմ մտածումները. 24 Եվ տե՛ս, եթե չար ճանապարհի մեջ եմ, առաջնորդի՛ր ինձ դեպի հավիտենական ճանապարհը:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: